ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ- N 001

«_20_» «_ապրիլի_» 2018թ.

ք. Երևան

Երևանի N6 արհեստագործական պետական ուսումնարանը, ի դեմս տնօրեն Սոնա Գրիգորյանի (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և "Տերտերյան և ընկերներ " ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Մարգսյանի , որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքները /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/՝ նրա կողմից նշված հասցեով/ներով/:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) Չընդունել Ապրանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը սույն պայմանագրին համապատասխանող Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տուգանքը.

3.1.2 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Վաճառողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) առաքված ապրանքը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ապրանքի առաքման ժամկետը:

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Ընդունել և ընդունել Տեխնիկական բնութագրին համապատասխան մատուցված Ապրանքի արդյունքը, իսկ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Վաճառողին:

3.2.2 Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Գնորդի կողմից սույն պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ապրանքի մատակարարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

3.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 4. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ապրանքի մատուցման ավարտի օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է ներկայացնում առաքված ապրանքի մասին մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 4):

4.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե առաքված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունն չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.4 Եթե Գնորդը սույն պայմանագրի 4.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 4.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

5.1. Սույն պայմանագրով Կատարողի կողմից մատուցման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է 386200 *(երեք հարյուր ութսունվեց հազար երկու հարյուր)* ՀՀ դրամ, եթե Վաճառողը ԱԱՀ վճարող է՝ ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ապրանքի գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ
Գնորդը՝ նվազեցնելու այդ գինը:
5.2. Պատվիրատուն իրեն առաքված ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝
դրամական միջոցները վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:
Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման
արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 3 հավելվածով սահմանված վճարման
ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ
ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում):

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում Ապրանքի մատուցման՝ սույն
պայմանագրի պահանջների պահպանման համար:
6.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին
չհամապատասխանող Ապրանք առաքելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է
տուգանք՝ սույն պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ
տասնորդական) տոկոսի չափով:
6.3 Սույն պայմանագրով նախատեսված Ապրանքի առաքման ժամկետը խախտելու
դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝
մատուցման ենթակա, սակայն չառաքված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ
հարյուրերրորդական) տոկոսի չափով:
6.4 Սույն պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը
հաշվարկվում և հաշվանցվում են Ապրանքն առաքելու արդյունքում Վաճառողին վճարման
ենթակա գումարների հետ:
6.5 Գնորդի կողմից սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված ժամկետի խախտման
դեպքում Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝
վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ
հարյուրերրորդական) տոկոսի չափով:
6.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց
պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար
պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց
պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ֆորս-մաժոր)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով
պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն
ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի
ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը
չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը,
ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը,
քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի
դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում
սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի
ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն
իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում և կողմերի համար պարտադիր է դառնում կնքելու պահից, գործում է, մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

8.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող Ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.4 Ապրանքների առարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ապրանքների առաքման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

8.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Գնորդ կամ ստացող) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները

րգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող որմերով և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

8.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

8.7 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N1, N2, և N4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.8 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.9 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.10 Սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն սկսվում է 20.04.2018 և ավարտվում է 10.05.2018թ-ին:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
| --- | --- |
| «Երևանի N6 արհ. պետ. ուսումնարան» ՊՈԱԿ | "Տերտերյան և ընկերներ" ՍՊԸ |
| ք. Երևան, Հասրաթյան 3 /Բաշինջաղյան 100/ | ք. Երևան, Երևանյան 17 3-47 |
| (հասցեն) | (հասցեն) |
| Բանկի անվանումը` ԱՇԻԲ Մալաթիա մ/ճ | Բանկի անվանումը` Բիբլոս Բանկ Արմենիա |
| հ/հ 2474233154790010, հվհհ 01202966 | հ/հ 21400-04540550100 հվհհ 05016021 |
| (բանկային վավերապայմանները) | (բանկային վավերապայմանները) |
| Տնօրեն Ս. Գրիգորյան | Տնօրեն Ա. Մարգսյան |
| Կ.Տ. | Կ.Տ. |